ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք
ք.Ստեփանավան, +374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունվար 2026 թվականի N 01

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՅՏԻ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետը՝ Ստեփանավան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կազմակերպման և համակարգման նպատակով՝ ***որոշում եմ***.

1. Ստեղծել Ստեփանավան համայնքում 2026 թվականին մասնակցային բյուջետավորման գործընթացի համակարգող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին՝
   1) կազմել և սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5-օրյա ժամկետում համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել համայնքում 2026 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման ժամանակացույցը:
   2) հաստատված ժամանակացույցին համապատասխան կազմել և համայնքի ղեկավարին ներկայացնել մասնակցային բյուջետավորման գործընթացի յուրաքանչյուր փուլի ավարտի վերաբերյալ ընթացիկ և տարեկան ամփոփ հաշվետվություններ:
3. Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների ներկայացման հայտի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Հաստատված է
Ստեփանավան համայնքի ղեկավարի
08 հունվարի 2026թ-ի N 01 որոշմամբ

ԿԱԶՄ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

h/h	Հանձնաժողովի անդամի անունը, ազգանունը	Զբաղեցրած պաշտոնը, զբաղմունքը	Հանձնաժողովում կարգավիճակը	Հեռախոս
1	Արսեն Հարությունյան	Համայնքի ղեկավարի տեղակալ	Հանձնաժողովի նախագահ	077113181
2	Լուսինե Հովհաննիսյան	Համայնքի ղեկավարի խորհրդական	Հանձնաժողովի նախագահի տեղակալ	093208143
3	Շահանե Մոսինյան	Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ	Հանձնաժողովի քարտուղար	077301471
4	Էլմիրա Ռևազյան	Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ	Հանձնաժողովի անդամ	096741742
5	Արսեն Ավագյան	Ստեփանավանի համայնքապետարանի քաղաքաշինության, հողաշինության և շրջակա միջավայրի պապհանության բաժնի պետ	Հանձնաժողովի անդամ	098000448
6	Ավետիկ Սարգսյան	Համայնքի ղեկավարի օգնական	Հանձնաժողովի անդամ	099222091
7	Արուս Բոյաջյան	«Հաշվապահական հաշվառում» ՀՈԱԿ-ի տնօրեն	Հանձնաժողովի անդամ	099110499
8	Սամվել Անտոնյան	Արմանիս բնակավայրի վարչական ղեկավար	Հանձնաժողովի անդամ	093851688
9	Գևորգ Մանուկյան	Ուրասար բնակավայրի վարչական ղեկավար	Հանձնաժողովի անդամ	077353025
10	Արթուր Սավթալյան	Կաթնաղբյուր բնակավայրի վարչական ղեկավար	Հանձնաժողովի անդամ	093960214
11	Հռիփսիմե Պապյան	«Հռիփսիմյանց շունչ» ՀԿ-ի նախագահ	Հանձնաժողովի անդամ	099887122
12	Արծրուն Հակոբյան	Ավագանու անդամ	Հանձնաժողովի անդամ	094001113
13	Անուշ Բաղդասարյան	Ավագանու անդամ	Հանձնաժողովի անդամ	099344433
14	Սվետլանա Սարգսյան	Համայնքի ակտիվ բնակիչ	Հանձնաժողովի անդամ	093146620
15	Միքայել Մարտիրոսյան	Կամավոր	Հանձնաժողովի անդամ	096495944
16	Մանե Քալաշյան	Կամավոր	Հանձնաժողովի անդամ	096030312

Հաստատված է
Ստեփանավան համայնքի ղեկավարի
« 08» հունվարի 2026թ-ի N 01 որոշմամբ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ

N	Մասնակցային բյուջետավորման իրականացման փուլ	Միջոցառում (նկարագրել իրականացվելիք գործողությունները)	Պատասխանատու և կատարողներ	Աջակցող թիմակիցներ	ժամկետներ
1	Նախապատրաստական փուլ	1.Ավագանու որոշման ընդունում 2.Համայնքի ղեկավարի որոշման ընդունում	Համայնքի ղեկավար Արմեն Գրիգորյան Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Էլմիրա Ռևազյան Հասմիկ Մովսիսյան	Հանձնաժողովի նախագահ և անդամներ	14.11.2025-15.01.2026թ.
2	Իրազեկման փուլ	1.Ստեփանավան համայնքի պաշտոնական կայք-էջում և ֆեյսբուքյան էջի հրապարակումներ 2. Հանդիպում համայնքապետարանի աշխատակազմի և ավագանու անդամների հետ 3. Հանդիպում գյուղական բնակավայրերում բնակվող տարբեր խմբեր ներկայացնող անձանց հետ **4.** հանդիպում համայնքային ենթակայության կառույցներում	Հանձնաժողովի նախագահ և տեղակալ Աշխատակազմի գլխավոր մասնագետ Շահանե Մոսինյան Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Արմինե Բալայան, հանձնաժողովի անդամներ	Համայնքի ղեկավար Արմեն Գրիգորյան	16.01.2026թ.-30.01.2026թ.

		5. հանդիպում համայնքում գործունեություն ծավալող քաղաքացիական հասարակության կառույցների հետ 6. հանդիպում Ստեփանավան համայնքում բնակություն հաստատած, ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց հետ 7. հանդիպում կրթական հաստատությունների աշխատակիցներ և ուսանողների հետ			
3	Առաջարկների ներկայացման փուլ	Առաջարկներ ներկայացնելու իրավունք ունեն՝ավագանու սահմանված չափանիշներին համապատասխան 16 տարին լրացած համայնքի յուրաքանչյուր բնակիչ՝շահագրգիռ անձ, ՔՀԿ-ներ	Հանձնաժողովի նախագահ և անդամներ	Հանձնաժողովի նախագահ և անդամներ	31.01.2026-10.02.2026թ.
4	Առաջարկների նախնական գնահատման փուլ	1. .Հանձնաժողովը որոշում է յուրաքանչյուր առաջարկի համապատասխանությունը սահմանված չափանիշներին և լրացնում համայնքի ղեկավարի կողմից սահմանված՝առաջարկների	Հանձնաժողովի նախագահ և անդամներ	Հանձնաժողովի նախագահ և անդամներ	11.02.2026-13.02.2026թ.

		չափանիշներին համապատասխանության աղյուսակը 2. Հանձնաժողովը կազմում է քվեարկության համար պատրաստված առաջարկների ցանկը՝համապատասխան հիմնավորումներով, Սահմանված չափանիշներին չհամապատասխանող առաջարկների ցանկը՝համապատասխան հիմնավորումներով: 3. Սահմանված չափանիշներին համապատասխանող առաջարկները տեղափոխվում են քվեարկության փուլ			
5	Հանրային քննարկումների և լսումների փուլ	ընտրված առաջարկների վերաբերյալ հանրային քննարկումների և լսումների կազմակերպում	Հանձնաժողովի նախագահ և անդամներ	Հանձնաժողովի նախագահ և անդամներ	14.02.2026-17.02.2026թ.
6	Քվեարկության փուլ	Քվեարկության իրականացում Քվեարկության արդյունքների ամփոփում, հաղթած առաջարկների բացահայտում	Հանձնաժողովի նախագահ և անդամներ	Հանձնաժողովի նախագահ և անդամներ	18.02.2026-25.02.2026
7	Իրականացման փուլ	Ընտրված առաջարկը(ները) հանձնաժողովը	Հանձնաժողովի նախագահ և անդամներ	Ֆինանսատնտեսագիտական	01.03.2026-30.12.2026թ.

		փոխանցում է համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան բաժնին հետագա մշակման համար: Մշակումն իրականացվում է սահմանված նորմատիվ տեխնիկական պահանջներին համապատասխան, կազմվում են նախագծանախահաշվակային առաջադրանքներ և այլ տեխնիկական փաստաթղթեր: Համայնքի ղեկավարը ընտրված և մշակված առաջարկը՝ հիմնավորումներով, ներկայացնում է համայնքի ավագանու հավանությանը, որից հետո համայնքի ղեկավարը հանձնարարում է համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան բաժնին՝ իրականացնել ընտրված առաջարկը(ները)՝ պահպանելով գնումների մասին օրենսդրության և այլ նորմատիվ ակտերի		բաժին «Ստեփանավանի հաշվապահական հաշվառում» ՀՈԱԿ Քաղաքաշինության, հողաշինության և շրջակա միջավայրի պահպանության բաժին	

		պահանջները: Ընտրված առաջարկի(ների) իրականացման նկատմամբ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարն իրականացնում են մշտադիտարկում: Համայնքի ղեկավարն ապահովում է առաջարկի(ների) հեղինակի ներգրավվածությունը մշտադիտարկման գործընթացում			
7	Հաշվետվության փուլ	Մասնակցային բյուջետավորման գործընթացի ողջ ընթացքում հանձաժողովը կազմում և համայնքի ղեկավարին է ներկայացնում հաշվետվություններ: Հաշվետվությունները կազմվում են գործընթացի յուրաքանչյուր փուլերի ավարտից հետո՝ Մինչև հաջորդ տարվա մարտի մեկը հանձնաժողովը համայնքի ղեկավարին է ներկայացնում ամփոփ հաշվետվություն, որը համայնքի ղեկավարը ավագանուն է	Հանձնաժողովի նախագահ և անդամներ	Հանձնաժողովի նախագահ և անդամներ	14.11.2025-30.12.2026թ.

		ներկայացնում բյուջեի տարեկան հաշվետվության հետ միաժամանակ: Հանձնաժողովը գործընթացի յուրաքանչյուր փուլի ավարտից հետո, հաշվետվությունների հիման վրա կազմում և համայնքի բնակիչներին է ներկայացնում տեղեկատվական ամփոփագրեր մասնակցային բյուջետավորման գործընթացի մասին: Հաշվետվությունները բնակչությանը ներկայացվում են իրազեկման արշավի գործիքակազմի միջոցով:			

Հաստատված է
Ստեփանավան համայնքի ղեկավարի
« 08» հունվարի 2026թ-ի N 01 որոշմամբ

ԱՂՅՈՒՍԱԿ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

N	Առաջարկի անվանումը	ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ						Տեղափոխվել է հանրային քննարկումների և լսումների փուլ
		Իրականացվելու է համայնքի տարածքում	Իրականացվելու է տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակում	Իրականացման բյուջեն չի գերազանցում ավագանու հատկացրած սահմանաչափը	Հանդիսանում է նոր առաջարկություն[1]	Տեխնիկապես հնարավոր է իրականացնել	Համապատասխանում է ավագանու սահմանած առաջնահերթություններին	
1		Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Այո/ոչ
2								
3								

(այդ թվում՝ համայնքի տվյալ տարվա բյուջեով նախատեսված այլ ծրագրերի հետ առաջարկ-նախագծերի համընկնման բացառման) և ներկայացվող յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար անհրաժեշտ գումարի առավելագույն սահմանաչափը:

[1]Առաջարկը իրականացման փուլում չէ, ընդգրկված չէ համայնքի միջնաժամկետ ծախսային ծրագրում, տվյալ տարվա աշխատանքային պլանում և բյուջեում, չի իրականացվելու այլ կազմակերպությունների կողմից:

Հաստատված է
Ստեփանավան համայնքի ղեկավարի
«08» հունվարի 2026թ-ի N 01 որոշմամբ

ՀԱՅՏ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԻ

1	**Առաջարկի հեղինակի անուն,ազգանուն /անվանում/**	
2	**Կոնտակտային տվյալներ** /հասցե, հեռախոս, էլ.փոստ/	
3	**Առաջարկի անվանումը, նկարագրությունը**	
4	**Հիմնախնդիրը, որի լուծմանն ուղղված է առաջարկը**	
5	**Առաջարկի իրականացման շնորհիվ ակնկալվող արդյունքները**	
6	**Առաջարկի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները**	

Հաստատված է
Ստեփանավան համայնքի ղեկավարի
« 01» հունվարի 2026թ-ի N 01 որոշմամբ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հանձնաժողովը՝

1) կազմակերպում և համակարգում է մասնակցային բյուջետավորման գործընթացը,
2) կազմակերպում է գործընթացի մասին համայնքի բնակչության իրազեկմանն ուղղված տարբեր միջոցառումներ՝ համագործակցելով լրատվամիջոցների հետ,
3) համագործակցում է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ,
4) իր կազմից ձևավորում է տարբեր աշխատանքային խմբեր,
1) իրականացնում է գործընթացի համար անհրաժեշտ ադմինիստրատիվ և լոգիստիկ աշխատանքներ, նախապատրաստում է տարբեր նյութեր և փաստաթղթեր, մշակում կամ համաձայնեցնում է տեղեկատվական նյութերի բովանդակությունը՝ հրապարակումների, հոդվածների, հարցազրույցների, ներկայացումների, բուկլետների, պաստառների, տեսանյութերի թեմաները,
2) համակարգող և խորհրդատվական աջակցություն է տրամադրում քաղաքացիներին և նախաձեռնող խմբերին առաջարկների պատրաստման և ներկայացման գործընթացում,
3) կազմակերպում է առաջարկների ընդունման և քվեարկության էլեկտրոնային համակարգի պատշաճ գործունեությունը,
4) կազմակերպում է առաջարկների այլ ընտրանքային տարբերակով ընդունման և քվեարկության գործընթացը,
5) գնահատում է քաղաքացիների և նախաձեռնող խմբերի կողմից ներկայացված առաջարկների հայտերը,
6) կազմում է քվեարկության համար պատրաստված առաջարկների ցանկը՝ համապատասխան հիմնավորումներով,
7) կազմում է սահմանված չափանիշներին չհամապատասխանող առաջարկների ցանկը՝ համապատասխան հիմնավորումներով,
8) ամփոփում է քվեարկության արդյունքները,
9) անհրաժեշտության դեպքում համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում առաջարկություն՝ գործընթացի փուլերի ժամկետների փոփոխության վերաբերյալ,
10) կազմում և համայնքի ղեկավարին է ներկայացնում գործընթացի վերաբերյալ ընթացիկ և տարեկան հաշվետվություններ և ապահովում է հաշվետվությունների հրապարակումը կայքում:

Հաստատված է
Ստեփանավան համայնքի ղեկավարի
« 08» հունվարի 2026թ-ի N 01 որոշմամբ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

Հանձնաժողովը՝

1) հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով,
2) հանձնաժողովի հերթական նիստերը հրավիրում է նախագահը,
3) հանձնաժողովի հերթական նիստերը հրավիրվում են ՄԲ գործընթացը մեկնարկելիս և յուրաքանչյուր փուլի ավարտին,
4) հանձնաժողովի հերթական նիստերի նպատակն է ապահովել ՄԲ գործընթացի հերթական փուլի մեկնարկը և ամփոփել նախորդ փուլի արդյունքները,
5) հանձնաժողովի յուրաքանչյուր հերթական նիստում ամփոփվում և հաստատվում են նախորդ փուլի արդյունքները և հաշվետվությունները, սահմանվում և հստակեցվում են մեկնարկող փուլում հանձնաժողովի կողմից իրականացվող միջոցառումները և հանձնաժողովի անդամների /աշխատանքային խմբերի պատասխանատվությունը/,
6) հանձնաժողովի արտահերթ նիստ հրավիրում է նախագահը կամ հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի մեկ երրորդը,
7) հանձնաժողովի նիստերը բաց են և դրանց խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել համայնքի բնակիչները, ինչպես նաև օրենքով չարգելված այլ շահառուներ,
8) հանձնաժողովն իրավասու է, եթե նիստին ներկայացած է անդամների ընդհանուր թվի կեսից ավելին,
9) որոշումներն ընդունվում են հանձնաժողով նիստի մասնակիցների ձայների մեծամասնությամբ, բայց անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդով,
10) ձայների հավասար բաժանման դեպքում որոշիչ է նախագահի ձայնը,
11) որոշումները ստորագրում են նիստին ներկա անդամները,
12) հանձնաժողովի աշխատանքների ադմինիստրատիվ և կազմակերպչական մասը, ինչպես նաև նիստերի արձանագրումն ապահովում է հանձնաժողովի քարտուղարը,
13) արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նիստին մասնակից բոլոր անդամները, հանձնաժողովի նիստերի արձանագրությունները հրապարակվում են կայքում,
14) հանձնաժողովի աշխատանքային խմբերի գործունեությունը կազմակերպվում է խորհրդակցությունների և քննարկումների միջոցով, որոնց արդյունքում կազմվում են զեկուցագրեր,
15) զեկուցագրերը ներկայացվում են հանձնաժողովի նախագահին և քննարկվում են հանձնաժողովի նիստում,
16) հանձնաժողովի նախագահի բացակայության ժամանակ նիստերը հրավիրում և վարում է նախագահի տեղակալը:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԶԵԿՄԱՆ ԱՐՇԱՎԻ ՄԱՍԻՆ

Իրազեկման արշավի ձևը *(ընտրել միայն իրականացված տարբերակները)*	**Արշավի իրականացման մանրամասները և ընդգրկման շրջանակը**
Համայնքապետարանների պաշտոնական էլեկտրոնային կայքում համապատասխան տեղեկության ներկայացում	• *Տեղեկատվության հրապարակման ամսաթիվը* • *Կայքի համապատասխան բաժին այցելությունների քանակը* • *Տեղադրել հղումները*
Սոցիալական ցանցերում տեղեկատվության ներկայացում	• *Տեղեկատվության հրապարակման ամսաթիվը* • *Տեղադրել հղումները*
ԶԼՄ-ների՝ ռադիոալիքների, թերթերի, հեռուստաալիքների օգնությամբ տարածում	• *Նշել ԶԼՄ-ների անունները* • *Ներկայացնել արշավի բովանդակությունը* • *Տեղադրել հղումները*
Տպագիր նյութերի՝ բուկլետների, թռուցիկներիմիջոցով տարածում	• *Տպագրված նյութերի քանակը* • *Տարածման վայրերը*
Պաստառների և ցուցատախտակների միջոցով տարածում	• *Պաստառների և ցուցատախտակների քանակը* • *Տեղադրման վայրերը*
Փողոցային հանդիպումներ	• *Բնակավայրերը, որտեղ իրականացվել են հանդիպումները* • *Հանդիպումներիքանակը* • *Հանդիպումներիմասնակիցների քանակը* • *Տեղադրել լուսաբանման/նկարների հղումները*
Այցեր բնակարաններ	• *Բնակավայրերը, որտեղ իրականացվել են այցերը* • *Տնային այցերիքանակը* • *Տեղադրել լուսաբանման/նկարների հղումները*
Հեռախոսազանգեր	• *Հեռախոսազանգերիքանակը*
Տարբեր հանրային վայրերում, կազմակերպություններում հանդիպումներ	• *Հանրային վայրերը, որտեղ իրականացվել են հանդիպումները* • *Հանդիպումներիքանակը* • *Հանդիպումներիմասնակիցների քանակը* • *Տեղադրել լուսաբանման/նկարների հղումները*
Տեղական ինքնակառավարման մարմինների, վարչական ղեկավարների նստավայրերում ժողովներ, լսումներ և քննարկումներ	• *Հանրային լսումների/քննարկումներիքանակը* • *Հանրային լսումների/քննարկումներիմասնակիցների քանակը* • *Տեղադրել լուսաբանման/նկարների հղումները*
Վարչական ղեկավարների նստավայրերում ժողովներ, լսումներ և քննարկումներ	• *Բնակավայրերը, որտեղ իրականացվել են քննարկումները* • *Քննարկումներիքանակը* • *Քննարկումներիմասնակիցների քանակը* • *Տեղադրել լուսաբանման/նկարների հղումները*

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ[1] ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

հ/հ	Առաջարկի անվանումը	Առաջարկի բովանդակությունը (ներառյալ բյուջեն)	Առաջարկի կարգավիճակը • *Ընդունվել է* • *Մերժվել է*	Մերժման դեպքում՝ հիմնավորումը
1.				
2.				

[1]Աղյուսակում լրացվում են Առաջարկների ներկայացման փուլում առցանց և թղթային տարբերակներով ներկայացված բոլոր առաջարկները:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առաջարկի անվանումը	**Քվեարկության արդյունքում հավաքած ձայների քանակը**	**Ծրագրի կարգավիճակը** • *Հաղթող ծրագիր (քվեարկության համար սահմանված նվազագույն շեմը հաղթահարած)* • *Իրականացվող ծրագիր, մեկնաբանություն ֆինանսավորման աղբյուրների մասին* • *Չհաղթած ծրագիր*
Քվեարկության մասնակիցների ընդամենը քանակ		

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ծրագրի անվանումը	
Ծրագիրը ներկայացնողի անուն/ազգանունը	
Ծրագրի բովանդակությունը	
Ծրագրի բյուջեն	
Իրականացման վայրը	
Շահառուների քանակը	
Իրականացման ժամանակահատվածը/սկիզբ-ավարտ/	
Ծրագրի միջոցառումները, ըստ իրականացնող մարմինների/կազմակերպությունների	
Հիմնական արդյունքային չափորոշիչները	
Հղումներ կայքում առկա տեսադարանին/նկարներին[2]	
Այլ կարևոր ծրագրային մանրամասներ	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք
ք.Ստեփանավան, +374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունվար 2026 թվականի N 02

ՄԱՐԶ ԼՈՌԻ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, ՔԱՂԱՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՓՈՂՈՑ 2 –ՐԴ ՓԱԿՈՒՂԻ 16 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԻ, 06-007-0302-0014 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՈՒԺԱՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՉԵՐՔԵԶՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վարուժան Վոլոդյայի Չերքեզյանի (անձնագիր AR0488043 տրված 053-ի կողմից 20.10.2017թ.) կողմից ներկայացված 23.12.2025թ. թիվ 3162 դիմումը, Ստեփանավան քաղաքի կադաստրային ճշգրտված քարտեզը, 14.03.2016թ. թիվ 14032016-06-0018 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և 24.11.2000թ. թիվ 0221109 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականները, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀօրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 72-րդ հոդվածի 2-րդ կետով, «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Նորոշմամբ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում՝ ***որոշում եմ.***

1. Կատարել՝ մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան, Երիտասարդական փողոց 2-րդ փակուղի 16 բնակելի տուն հասցեով, 06-007-0302-0014 կադաստրային ծածկագրում գտնվող, հողամասի մակերեսի ուղղում համաձայն կադաստրային քարտեզի տվյալների, ըստ որի նշված ծածկագրի հողամասի մակերեսը կազմում է 0,07184 հա:

2. Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան, Երիտասարդական փողոց 2-րդ փակուղի 16 բնակելի տուն հասցեով, 06-007-0302-0014 կադաստրային ծածկագրի հողամասի մակերեսի ուղղումը կատարել հիմք ընդունելով 24.11.2000թ. թիվ 0221109 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի հողամասի հատակագիծը բաժնում գծագրված հողամասի սահմանային չափերի, ըստ որի հողամասի մակերեսը կազմում է 0.07184 հա, որը համապատասխանում է կադաստրային քարտեզի 06-007-0302-0014 կադաստրային ծածկագրում գտնվող հողամասի մակերեսին և նշված մակերեսով հանդիսանում է քարտեզի միավոր, սակայն նշված վկայականում հողամասի մակերեսը գրառվել է 0.058 հա:
3. Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան Երիտասարդական փողոց 2-րդ փակուղի 16 բնակելի տուն հասցեով, 06-007-0302-0014 կադաստրային ծածկագրի 0.07184 հա մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել Վարուժան Վոլոդյայի Չերքեզյանի սեփականության իրավունքը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք
ք.Ստեփանավան, +374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունվար 2026 թվականի N 03

ՍԵՐՅՈԺԱ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ստեփանավան համայնքի վարչական տարածքում Սերյոժա Հովասափյան անհատ ձեռնարկատերը 2026 թվականի հունվարի 07-ին հայտ է ներկայացրել համայնքապետարան իր ձեռնարկատիրական օբյեկտում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն ստանալու համար: Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 08.04.2022թ. «Ստեփանավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» թիվ 29-Ն որոշումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և Ստեփանավան համայնքի ավագանու 19.12.2025թ. թիվ 108-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի Բաղրամյան փողոց թիվ 111/2 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Սերյոժա Հովասափյանի հայտը բավարարել և նրան տալ իր դիմումի համաձայն 0.8 քմ մակերեսով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն 01.01.2026-31.03.2026թթ. ժամանակահատվածի համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման, առևտրի սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնին տուրքերի գանձումները կատարել ըստ գործող կարգի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք
ք.Ստեփանավան, +374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունվար 2026 թվականի N 04

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԵՐՅՈԺԱ ՀՈՎԱՍԱՓՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Սերյոժա Հովասափյանի 2026 թվականի հունվարի 07-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3.1-րդ կետով և և Ստեփանավան համայնքի ավագանու 19.12.2025թ. թիվ 108-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի Բաղրամյան փողոց թիվ 111/2 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Սերյոժա Հովասափյանի հայտը բավարարել և նրան տալ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն ընթացիկ տարվա առաջին եռամսյակի համար՝ 01.01.2026-31.03.2026թթ. :
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման, առևտրի սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնին տուրքերի գանձումները կատարել ըստ գործող կարգի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք
ք.Ստեփանավան, +374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունվար 2026 թվականի N 05

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՌՈՄԻԿ ԱԹԱԲԵԿՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ռոմիկ Աթաբեկյանի 2026 թվականի հունվարի 07-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով և Ստեփանավան համայնքի ավագանու 19.12.2025թ. թիվ 108-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի Մ.Պապյան փողոց թիվ 10 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Ռոմիկ Աթաբեկյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ընթացիկ տարվա առաջին եռամսյակի համար՝ 01.01.2026-31.03.2026թթ.:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման, առևտրի սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնին տուրքերի գանձումները կատարել ըստ գործող կարգի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ստեփանավան, +374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունվարի 2026 թվականի N 06

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎԻԿՏՈՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Վիկտոր Սարուխանյանի 2026 թվականի հունվարի 08-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով և Ստեփանավան համայնքի ավագանու 19.12.2025թ. թիվ 108-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի Բաղրամյան փողոց թիվ 8 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Վիկտոր Սարուխանյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ընթացիկ տարվա առաջին եռամսյակի համար՝ 01.01.2026-31.03.2026թթ.:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման, առևտրի սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնին տուրքերի գանձումները կատարել ըստ գործող կարգի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ստեփանավան, +374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունվարի 2026 թվականի N 07

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԻՐԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Սիրակ Ալեքսանյանի 2026 թվականի հունվարի 08-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով և Ստեփանավան համայնքի ավագանու 19.12.2025թ. թիվ 108-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի Անդրանիկի փողոց թիվ 2 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Սիրակ Ալեքսանյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ընթացիկ տարվա առաջին եռամսյակի համար՝ 01.01.2026-31.03.2026թթ.:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման, առևտրի սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնին տուրքերի գանձումները կատարել ըստ գործող կարգի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**